

ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՈՄՈՐՖՈՒՂՈՎԻԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի գիտական և պրակտիկ գործունեությունը էլ ավելի արդյունավետ դարձնելու համար ամբիոնը ձեռք է բերել նոր գերժամանակակից սարքավորում՝ Leica Zeno 5 GPS Handheld:

Leica Zeno 5 GPS շարժական ընդունիչը առաջին դասի տեխնոլոգիաների համադրություն է: Նրանում միավորված են բջջային հեռախոսի ֆունկցիաները և աշխարհատեղեկատվական տվյալների հավաքագրման ու մշակման



հնարավորությունները: Քանի որ Leica Zeno 5 GPS շարժական ընդունիչը ինտեգրված է GIS համակարգերի հետ, ուստի հնարավոր է դաշտային պայմաններում կարճ ժամանակում իրականացնել հանույթ, քարտեզագրում և տվյալների բազայի կուտակում:

Leica Zeno 5 ընդունիչի օգնությամբ հնարավոր է GPS ժամանակակից արբանյակային նավիգացիոն համակարգի միջոցով իրականացնել աշխարհագրական

տվյալների հավաքագրում և մշակում:

Leica Zeno 5 ձեռքի GPS-ի բնութագրիչներն են՝

- 48 ալիքային բարձր զգայունությամբ GPS ընդունիչ (SirfStarIV)
- Ամբողջական ֆունկցիաներով բջջային հեռախոս (GSM HSPA+ և CDMA, ինչպես նաև Wi-Fi և Bluetooth)
- Նորագույն բարձր կատարողական պրոցեսոր Sitara 3715 (OMAP3) 800 MГц
- Լայն (3.7"), բարձրակարգ VGA էկրան
- Օպերացիոն համակարգը Windows Embedded Handheld 6.5.3
- Մարտկոցը կբավարարի ամբողջ աշխատանքային օրը (10 ժամից ոչ պակաս)
- Ինտերակտիվ սենսորների ամբողջական փաթեթ՝ այդ թվում տեսախցիկ, թվային կողմնացույց և այլն: